

Ահաւասիկ արձանագրութիւնն:

“ԹՎ. ՈՒԼԻ: Հնորհիւն Աստուծոյ մէք նուստ աշակերտք Աթայ և Սիմեոնի Սոսթանէս և Մաթէոս և Գրիգորէս շինեցաք զսուրբ Սարապետս ի վերայ շերմաց սոցա (.) և Առաջնորդիւ սուրբ ուխտիս սահմանեցին Բ. Ճրագալոյցն վասն հոգոց նոցա և այլ ննջեցելոցն որ յայսմ հանգստարանի: ,

Գեռ չկնքած համառօտ Տեղադրութիւնս՝ պատշաճ կ'համարիմ յաւելուլ, զի երբեմն Արեւանայ վիճակին Առաջնորդ կը բնակէր այս վանուցս մէջ, որ խիստ պատուաւոր կը համարուէր մինչև անգամ երբ նորա Առաջնորդ կը գայր ի Ս. Եջմիածին, զանգակները կը հնչեցնէին: Աստ վանահայր եղած է Գրիգոր Վկայասէրն ևս որդին Մագիստրոսի:

Այս վանուցս անցքերը շատ են, և Առաջնորդքն բազում նեղութեանց, տառապանաց և յափշտակութեանց հանդիպած ինչպէս յամին 1602 ևն:

Այժմեան Վ. և Հ. Սիմեոնիկոս ամենայն Հայոց Տ. Տ. Գեորգ Դ՝ երբ ի 1868 թուականին օդափոխութեան զնացած էր ի Գեղարդ, յատուկ Սոնդակաւ սոյն Ամենափրկչիս աւեր վանքը յանձնեց Գեղարդայ վանահօր Միքայէլ վարդապետին՝ զնա ինքն՝ կարգելով վանահայր նաև սոյն վանուցս Ամենափրկչի, որպէս զի շէնցնէ զայն ըստ կարելոյն ազատելով ամայութենէ և աւերակութենէն, և իւր կողմանէ մի փոխ վանահայր կարգելով՝ խնամք տանի և հոգայ նորա պէտքերը, վարէ շրջակայ սեպհական հոգերը, միանգամայն պայծառացնէ զայն, ուր շատ յարմար է մի հոգև. ուսումնարան հիմնել և ազգօգուտ հանդիսացնել:

Բայց նորին Վ. և Հ. Օծութեան Ս. Հայրապետի Սոնդակաւ անգործադրելի մնացած է Գառնուոյ անտառապետի և վանահօր Զամյեանցի ի մէջ պատահած մի կրօնոյ համար, սակայն երբ և իցէ մտադրութեամբ է վերանորոգել զայս և պայծառացնել, վանորոյ և այլ կարեւոր միջոցներ տնօրինած է Ս. Հայրապետս: Եղիւ թէ՛ Հառիճոյ վանուց վերայ գտնուած Աղեքսանդրապօլցի բարեսէր ազգայիններէ ջանիւք Յովսէփ Աւագ Քահանայի Սոստանեանց կազմուած արդիւնաւոր ընկերութեան նման մի ընկերութիւն կազմելով Արեւանայ ազգայինք մեր՝ զարդարէին սոյն Ամենափրկչի վանքս, և հիմնէին անդ մի հոգևոր ուսումնարան, և վիճակին համար ուսեալ և կրթեալ քահանայացուք հասուցանէին աստի: Թէև Արեւանայ թեմ. դպրոցն ևս բաւական կարէր լինել, բայց տեղոյն օգ շրջակայ զիւղօրէից մանկտեաց համար անտանելի է, թողում ուրիշ անյարմարութիւնքը:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՕՐԷՆՍԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ.

Ա.

ՅԱՌԱՋԱՐԱՆՈՒԹԻՒՆ.

Մարդիկ ասում են, թէ ամեն բան հեռուից աւելի լաւ է թվում, քան թէ մօտիկից. ինչ բնաբան կամ զաղափար կայ այդ զրոյցի մէջ, ես չեմ քննում այժմ,

բայց հարկաւոր եմ համարում ասել միայն որ այդ կարծիքն, իբրեւ ընդհանուր կանոն, միակողմանի է, աւելի պարզ՝ սխալ է, որ ձեւ մտածողութիւնով և մարդս հասած լինի այդ եզրակացութեանը: Աթէ վերացական մտածողութեան ձեով մարդիք հասել են յիշեալ եզրակացութեանը, մտածելով «պիտի» հարկաւոր է ի նկատի ունենալ, որ նորա վերջը կախումն ունի նորա սկզբից, այսինքն հարկաւոր է ճանաչել մտածողի ընդհանուր հայեացքը բնութեան վերայ: Այն անթիւ պատճառներ, որոնք ծանուցանում են մարդոյ մէջ ատելութեան զգացմունքներ և մտքեր, այդպիսի դէպքերում մարդը ամեն բանի մէջ կամենում է տեսնել միայն նորա վատ կողմերը, ամենեւին ուշադրութիւն չը դարձնելով լաւերի վերայ, նա մինչև անգամ բարի յայտնութիւնների մէջ աշխատում է տեսնել վատ դժեր, արատներ: Յունաց փիլիսոփայութեան վերջին քայլերը պատկուեցան մի այդպիսի մշտն օւղղութիւնով, որոյ գլխաւոր դադափարն էր հերքել այն ամենը, ինչ որ մարդկութիւնը մինչև այն օր հնարել էր իւր բարոյական, մտաւորական և իրօղական բարօրութեան համար, և իսկապէս հետևողաբար ընթանալով՝ այդ ուղղութիւնը՝ կամ քանդում է մարդկային կեանքի հիմքերը, կամ երկար ժամանակ լինում է սրկելք մարդկութեան զարգացմանը: Ապօղնէքը неспомимости և հերքողնէքը софисты ծառայում են միևնոյն վերոյիշեալ նպատակին: Արծես թէ, բնութիւնը նորանց ստեղծել է միայն նորա համար, որ նոքա, սակաւութիւնները, ջնջին այն բաները, որոնք հնարել է մարդկութեան սեռի փնտրող

մեծ մասը: Հերքողութիւնը սխալմատական, կարգաւոր մէկ ուսումն է, դա է մէկ արհեստական կուսակցութիւն, և ունենում է ծնունդ կամ կեանք միայն այն ժամանակը, երբ մարդկային մտածողութիւնը հասնում է որ և իցէ աւելի բարձր աստիճանի, քան թէ երբ նա (մտածողութիւնը) էր դեռահաս: Հերքողութեան առաջին պատճառն, ինչպէս ցոյց կը տայ մեզ մարդկութեան մտածութեան պատմութիւնը, լինում է սխալ կարծիք կամ հասկացողութիւն այն փիլիսոփայական սկիզբների, որոնք ընդունված են լինում մի որ և իցէ աղբի կամ ժողովրդի մէջ, և այդպիսի սխալ եզրակացութիւնը սխալ կերպիւ արհեստական սկզբիցը արած և հասցրած մինչև իւր վերջին աստիճանը, տալիս է մեզ այն կուսակցութիւնը, որ անուանվում է Սփեւապանուի-նէն կամ հերքող-նէն: Օրինակ, Սփրատի փիլիսոփայութեան գլխաւոր սկիզբների մէկն էր այն ճշմարտութիւնը, որ օրինաւոր ուսումն անհասարակ պիտի համարվի այն, որ հիմն է ունենում նկատողութիւնը բնութեան վերայ, այսինքն, եզրակացութիւնը պիտի հիմնուի բնութեան յայտնութեանց վերայ, կամ թէ, աւելի պարզ ասած, ամէն կանոն և ամէն հասկացողութիւն պիտի հիմնուի այն զգացմունքների և տպաւորութեանց վերայ, որոնք մենք ստանում ենք բնութեան յայտնութիւններից: Այդ բնական և պարզ կանոնից Սփրատի աշակերտները հետևողաբար (սխալ ճանապարհով) վերջ ի վերջոյ հասան այն կարծիքին, թէ, ինչպէս ամենայն առարկայի կամ դադափարի զոյութիւն կախումն ունի մեր անձնական

անհատական (индивидуальный) տպաւորութիւններից, ուրեմն արտաքին կամ բարոյական բնութեանց մէջ չկան և չեն կարող լինել, որեւիցէ ընդհանուր, մշտնջենական որպիսութիւն ունեցող յայտնութիւններ, և ուրեմն մենք չենք կարող ունենալ առհասարակ ինչ և ինչ հասկացողութիւն, որ լինի ընդունելի մարդկութեան համար: () Երինակ, ցուրտը և տաքը մենք զգում ենք այն ժամանակը, երբ օդը ունենում է մեղ վերայ այդ կամ այն տպաւորութիւնը. ես մըսում եմ, իսկ միւսը՝ շոգում է միւսին ոգի մէջ: Այստեղից հերքողները հաստատում են, թէ չկայ բնութեան մէջ ոչ ցուրտ և ոչ տաք, և ուրեմն մենք չենք կարող ունենալ ոչինչ գաղափար ցուրտի և ոչ տաքի համար: Միւսին հայեացքով սովեւտականներն նայում են բարոյական յայտնութեանց վերայ՝ բարւոյն և չարին, օրինակ, մէկ գործ կամ խօսք ինձ թվում է բարի, իսկ ձեզ — չար. ուրեմն ասում են նոքա, չկայ աշխարհիս մէջ ոչ բարի գործ և ոչ չար գործ, կը նշանակի, որ մենք ոչինչ հասկացողութիւն չենք կարող ունենալ բարւոյ և չարի մասին ևն. ևն: Այդ կուսակցութեան ծննդեան երկրորդ պատճառը պիտի համարուի հակաճառութիւնը, յանդիմանութիւնը, պատերազմը հարստութեան և աղքատութեան. վերջին դրութեան մէջ գտնվողներն պահանջելով առաջիններից հաւասարութիւն իրաւանց և կայից, և մի այդպիսի նպատակին հասնելու համար՝ վերջիններն նախապաշարմունք են համարում և անուանում այն ձմարտութիւնները, որոնք անհատներին և ազգերին տալիս են անհրաժեշտ

սուրբ իրաւունք և պարտաւորութիւն՝
պաշտպանել և պաշտել իւրեանց սեպ-
հականութիւնը, իւրեանց ծագումն, ե-
կեղեցական և պատմական աւանդութիւն-
ներն: Աղբյուրութիւն քարոզելով հեր-
քօղներն իսկապէս ջնջում են այն պայ-
մանները, որոնց դոյութիւնը միայն կա-
րօղ է լինել հիմն քրիստոնէական եղբայ-
րութեան և խելացի քաղաքական ազա-
տութեան: Արպէս որ լինի հերքողական
մտածողութեան պարունակութիւնը, մի-
այն մարդկային պատմութիւնը և նորա
ծննդեան ժամանակը պարզ ցոյց կ'տան
մեզ, որ այդպիսի կուսակցութիւնը իւր
կենդանութեան և դոյութեան համար
պահանջում է ազգային կամ մարդկու-
թեան զարգացման որ և իցէ բարձր աս-
տիճան, կեանքի, դատտիարակութեան և
զրականութեան մէջ փիլիսոփայական կար-
ծիքների տարածումն:

Արկրորդ կարգի մասաճողութիւնը, որ անուանեցի Ապելլ-Նիւն, ունէ մի այլ պատմաբանական ծագումն. նա իբրեւ հետեանք մէկ պատճառի, վերջնիով զանազանվում է հերքողութիւնից նորանով որ՝ որքան հերքողութիւնը է ուսումն, ինչպէս ասացի, սխտեմատիկական, կանոնաւոր, այնքան Ապելլ-Նիւնը հեռու է արհեստական ընդհանուր կանոններից: Ատելլութեան ծագման պատճառներն լինում են անթիւ, իւրաքանչիւր ատող մարդոյ մասին կարելի է գտնել մէկ ինքնաձեւ ատելլութեան պատճառ. մէկն այնպէս է դաստիարակուել, որ սատանայի հետ եղբայրութիւն է անում, միւսը՝ միշտ կեանքի հարուածների տակ ընկնելով՝ հարկաւոր է համարում սատանայի հետ եղ-

բայրութիւն անել. երրորդը՝ իւր այս կամ
այն ազգային պատմական անցքերի տը-
պաւորութեան տակ լինելով՝ կորցնում
է հաւատարմութիւնը դէպի յայտնու-
թեան բարի նշանակութիւնը, դէպի իւր
մերձաւորի բարի գործը են. Եւ: Միով
բանիւ, այդպիսի մտածողութեան և զգա-
ցողութեան ձեւերը ունեն անհատական
բնութիւն և պատճառներ, և ուրեմն նա
չէ կարող համարվիլ արհեստական մտա-
ծողութեան ձեւ, որովհետեւ նորա մէջ
չկայ լոգիկայ, տրամաբանութիւն և հե-
տեանքը նորա չունէ պատճառ կամ ըս-
կիզբն անցեալի մէջ: Այդպիսի մտածող-
ներն չեն կամենում լոգիկաբար մտածել
և մտածողութիւնը նոցա կարծիքով լոկ
պարապմունք է: Միայն հարկաւոր է ա-
սել, որ նոքա մտածողութեան հարկա-
ւորութիւնը հերքում են, երբ վերջինն
ծառայում է, կամ ծառայելու է հասար-
ակութեան կամ ուրիշի բարօրութեանը.
իսկ նա պաշտպանվում է, երբ մտածո-
ղութիւնն ծառայում է կամ պիտի ծա-
ռայէ նորա բարօրութեանը: Ուրեմն աւե-
լի ուղիղ կը լինի, եթէ մենք ընդունենք,
թէ Ա. Գոլնեբը (ПЕССИМИСТЫ) մտածողու-
թեան հարկաւորութիւնը հերքում են
միակողմանի, այսինքն երբ նա յարաբե-
րում է ուրիշին, և ընդունում են, երբ
նա իւրեանցն է յարաբերում: Այս մտա-
ղիւր եւմ այդպիսի մի պէսսիմիստի ներկա-
յացնել ընթերցողի յիշողութեանը վեր-
առնելով նորան մեր ազգից: (Եւնչու մեր
ազգից, ընթերցողը կը տեսնի յետագա-
յից:) Ներկայացրէք ձեզ մէկ գլուխը
մազից զբկած ոմն, փորը հաստացրած,
կրպակը լցրած անթիւ գումարով, որոյ

ամէն մի կոպէկը է յիշատակ արեան, ար-
տասուքի և խաբերայութեան, գլորվելով
անբան, անհոգ, բամբասանքը ծամելով
սիգարայի հետ քաշէ դալիս քուչէքում:
Այդպիսի պարոնները մի առանձին զուար-
ճութիւն են զգում այն հանգամանքներից,
որք պատճառ են տալիս նոցա զավզակու-
թիւն անելու, ինչպէս Ուոսերը կասեն՝
ПОЧЕТАТЬ ЯЗЫКЪ: Յանկարծ մէկին պատա-
հում է պարոնս, ի՞նչ կայ, հարցնում է
նրան, և պատասխան է ստանում այսպէս
թէ ,, այս ինչ մարդ այն ինչ բարի գործ
բռնեց, ազգային ուսումնարան բաց արաւ,
լրագիր հրատարակեց. միւսը՝ իւր գիտու-
թիւնով և արհեստականութիւնով այդ-
պիսի մի բարոյական կամ մտաւորական
քաջութիւն ցոյց տուեց և այսպիսի յա-
ռաջադիմութիւն ունեցաւ կեանքի մէջ
են. Եւ: Ուրեքը յարակցելուց յետ պա-
տասխանօղը շարունակում է իւր ճանա-
պարհը, թողելով պարոնին ծանր մտա-
ծողութեան մէջ: Աւ արդարեւ, մտածե-
լու առիթ կայ այստեղ: Մարդասիրական
կերպիւ կրթած մարդն չէ կարող չուրա-
խանալ այդ բանին, և չէ կարող չմտա-
ծել գործ զնել այլ ևս հնարներ իւ-
րեան կողմից տալ միջոց աճեցնել և պահ-
պանել այն յառաջադիմութիւններն, ո-
րոց համար այն երկու մարդիկ կը խօ-
սային: Իսկ մեր պարոնը ուրիշ ինքնաձեւ
մտածողութեանց մէջ էր. նա իւրեան մէկ
այլ կերպ վերաւորուած զգաց այն լուրերն
լսելուց յետոյ, իւրեանից նա կարծումէր
թէ մէկ թանկագին բան պակասեց, կամ
դժբախտութիւն նրան հանդիպեց: «Եւն-
տանելի է ինձ և պախարակելի իմ ծագ-
մանս և հարստութեանս, մտածումէր նա.

որ մութ ծագումն ունեցող ծծկերի մէկն
այդպիսի բաներ է սկսում, և շուտով յա-
ռաջ ընթանալով, միջոց կստանայ գրով,
խօսքով, կամ գործով քննել մեր կեան-
քը, մեր գործունէութիւնը, և այդպիսի
կիրպիւ պահասացնել կամ ջնջել մեր մին-
չե աշօր դադած նշանակութիւնը և
ձայնը հասարակութեան մէջ: , Աստա-
րեալ համոզուած լինելով, որ ո՛չ մարդ-
կութիւնը և ոչ ազգայնութիւնը չէ կա-
րող յառաջանալ իւրեանով և իւրպիսի-
ներով, իսկ իւր յառաջադիմութիւնը տե-
սանելով միայն ձնշելումը և կաշկանդելումը
մարդոյ պնդիւ ձգտողութիւնները, նա այդ
բոպէից սկսումէ փութով քայլել դէպ ի
իւր նպատակն: Այդ և տգէտ ամէն բարի
և խելացի բանի մէջ, նա այդ չար գոր-
ծումը ցոյց է տալիս զարմանալի ընդունա-
կութիւն և հեռատեսութիւն: Յոյսը դը-
նելով իւր ձայնի և նշանակութեան վե-
րայ հասարակութեան մէջ, նա վստաբա-
նում է այն մարդին, որի գովասանքը նա
լսեց: «Ի՞նչ է, ի՞նչպէս կարելի է, որ այդ-
պիսի մութը և չնչին Կապիւ լաւ բան դու-
րըս գայ,» քարոզում է նա. «մենք երբ եմք
տեսել որ մեր ազգից մէկը մէկ լաւ բան բըռ-
նի, և ի՞նչ լաւ բան է, որ ուրիշների պա-
կասութիւնները հրատարակվում են և ինչ,»
Եւ վերջապէս շարունակում է նա. «Մէկ
տեսէք, այդ մարդը ինքը ի՞նչ բարոյակա-
նութեան կամ գիտութեան տէր մարդ է,
և այդ պատճառաւ նա ստեղծում է երբեք
չե եղած պատմութիւն, որով կատարեալ
այն մարդին մրում է և թքում, ինչպէս
ասում են շայերը: , Լսողներն պարոնիս
լինում են՝ նորա կարգից, նորա զգացմանց
տէր, և նորա պէս նշանակութիւն ունե-

ցող հասարակութեան մէջ, մարդիկ:
Հասկանալի է աստից, որ վերոյիշեալ ան-
ձինք, որոց գործոց համար պարոնս լսեց
քանի մի խօսք, չե՞ն կարողանում ստա-
նալ ոչ մի միջոց հասնելու իւրեանց սուրբ
նպատակներին, հասկանալի է, որ նոցա
գործերն մեռանում են իւրեանց խանձա-
րուրի մէջ, պատրաստելով նորանց ևս մահ
քաղցից և ցրտից: Ե, յս կամ այսպիսի կեր-
պիւ յարաբերութիւն են ստանում մեր
գործերը մեր հասարակութեան մէջ: Վուք
կը հարցնէք. ի՞նչ է այդպիսի յայտնու-
թեանց բուն պատճառն: Որպիսի պատ-
ճառ կամենաք հնարեցէք յայտնութիւնը
մեկնելու համար իմ կարծիքով, գորա
մերձաւորագոյն պատճառն պիտի համար-
վի այն պէտէմը, այն Կապիւ-Ինչը, ո-
րոյ մասին խօսեցի քանի մի խօսք: Միայն
ատելութեան զգացմունքները, տիրելով
մեր գործունէութեանց վերայ և մեր քա-
ղաքական կամ ընտանեկան կեանքի մէջ
կարող են շարժել մեզ դէպի մի այդպիսի
վերոյիշեալ նկարագրած պարոնի վարմուն-
քը: Վուք կարող էք անուանել այդպի-
սի չար ձգտողութիւնները նախանձու-
թիւն, չարախնդացութիւն և ինչ, այնու
ամենայնիւ այդ յատկութիւններն ունին
մի ընդհանուր բնութիւն՝ այն է՝ ցանկա-
նալ տեսնել ամենայն յայտնութիւնների
մէջ նոցա վատ կողմերը, տալ նոցա վատ,
փաստակար նշանակութիւն կեանքի մէջ
ամենևին մոռնալով բարի հետեանքները:
Ե, յս պէս: Ուրեմն, թո՛ղ մենք համո-
զուած լինիմք, որ եթէ մեր ազգից մինչև
այսօր չէ եղել որ և իցէ բարի գործ ազգին
և ազգայնութեան օգուտ, եթէ մեր մէջ
եղած մինչև այսօր բազմաթիւ բարոյական

ոյժերը ճնշուած ոչինչ իրօղական և մրտաւորական հեռեանք չեն ունեցել մեզ համար, եթէ մեր ծուռ ու շտակ ծանաւարհներով դատած զբամները առատ ձեռնով վատնվել են շուայլութեանց համար օտարներին հարստացնելով, և եթէ մինչև վերջին օրերս մի որ և իցէ նշանաւոր դումար չէ եղել զո՛հ ազգի պիտոյքի մասին, եթէ մի որ և իցէ Հայ ընկած տեղից առանց ուրիշի օգնականութեան ոտքի կանգնել է իւրեան հանձարով և փորձառութեամբ, մենք աշխատել եմք մինչև այսօր վեր քցել այդպիսի Հային և ձգել այն աղքատութեան և ցեխի մէջ, որից նա իւրեան մաքրեց.— դոցա ամէնի պատճառն պիտի համարվի այն պէտքերը, որ պատել է մեր հոգին և խղճմանքը: Այո՛, ինչպէս առաջ ես ասացի, եթէ մենք ընդունենք միայլ ընդհանուր պատճառ այդ յայտնութիւններին, օրինակ ասենք, թէ նա է հերքողական ձև մտածողութիւն, սոփեստականութիւն, մենք կը սխալուինք: Որովհետեւ այդ ձև մտածողութիւնը պահանջումէ այն աստիճան մտաւորական զարգացման, որից մենք շատ և շատ հեռու ենք: Մենք կ'ստանանք մեզ, եթէ հաւատամք, թէ մեր մէջը կայ որ և իցէ ուսումն կամ ուսումնականութիւն, և թէ մեր ազգը կարող է անուանակոչել քանի մի ուսումնական անձինք: Ճշմարիտ է, կան մեր մէջը քանի մի անհատներ, որոնք տարիներ են գործ դրել անգիր անելու քանի մի արհեստական ճշմարտութիւններ, իսկ նոցա յարաբերութիւնները դէպ ի այդ ճշմարտութիւնները եղել են միշտ կրաւորական, այսինքն նոցա էութիւնը հասկանալուց մենք միշտ եղել ենք հեռու

և այդպիսի գիտութիւններ, եթէ նոքա արժանի են այդ անուանակոչութեան, ոչինչ յարաբերութիւն չեն ստացել մեր կեանքի հետ: Այդպիսի թերի ուսումն երբէք չէ ունեցել ազգեցութիւն մաքրելու մեր հոգին և խղճմանքը, երբէք չէ աճեցրել մեր խելքը, այլ ունեցել է մէկ արտաքին և այն ևս լոկ նշանակութիւն: Ուսումնարանի պատերի միջից դուրս գալով մենք մտել ենք կեանքի ասպարէզ և ընդունել ենք այն յիշատակ, որոնք ընդունված են եղել այնտեղ մեր նախնիքներից, և ապրուստի աղբիւրները գտնելու համար մենք չենք իրացրել մեր մէջ եղած ոյժերը, ուսումն, գիտութիւնները, այլ այս կամ այն քաղաքական յիշատակ, որոնք հաճելի են եղել վերոյգրեւալ գլուխները մազից զրկած պարոններին և սեահոգի զեռունքներին: Ասկ արհեստը, հասարակական հարցերը, ազգի պիտոյքները, ուսումնականութիւնը, դոքա դարձել են միայն ծիծաղելու առարկայք: Ուրեմն ինչպէս սոփեստականութիւնը պահանջումէ յայտնի մտաւորական զարգացման աստիճան, մեր այժմեան կեանքի ուղղաւորութիւնը չէ կարող մեկնվել դուրսնով, իսկ, կարծումեմ, մեր ընթերցողը պիտի համոզվի, որ այդպիսի գրութեան և մեր մտաւորական թմրութեան պատճառն պիտի լինի արեւելի-արեւմտի, պէսսիմիզմը, որ խոր արմատ է ձգել մեր ներքին կեանքի մէջ:

Ընթերցողը կարող է նկատել յառաջաբանութեանս անհեռաւորութիւնը: Աս սկսեցի կարճառօտ խօսել երկու ձև ընդհանուր մարդկութեան մտածողութեանց վերայ, վերջապէս դատողութիւնները դո-

բա մասին մէկ անորոշ օրինակ առնելով մեր կեանքից և այդ օրինակի պատճառաւ ես ասացի իմ նուաստ կարծիքը մեր զարգացման յետաձգութեան պատճառի մասին: Բայց այդ անհետեւողութիւնը հարկաւոր էր յառաջաբանութեանս նպատակը պարզելու: Աս հարկաւորութիւն չեմ տեսնում տարածել Հայոց գրականութեան մէջ փիլիսոփայական այն ևս հին, անցած գնացած, դիտութիւններ Բանի Բանի: Արջիններով ես կամենում էի միայն ցոյց տալ այն բարոյական յարաբերութիւնը, որով մենք դիմում ենք ամէն մի մեր կեանքի յայտնութիւններին: Արջանով ես կամենում էի միայն ասել իմ կարծիքը այն պատճառի մասին, որով յետաձգում է մեր զարգացումն, և կարծում եմ, որ բաւական հասկանալի է այն հայեացքը, որ այդ ցանկալի զարգացման արգելքները մեզանից ծնած, չեն մեր սխտեմատիկական, արհեստական և բարոյական համոզմունքը, այլ մի կերպ քաղաքական դրութիւն, երբ ազգային յառաջադիմութիւնը զանազան բերմունքների զօրութեամբ կենտրոնացած է լինում սակաւաթիւ անձանց ձեռքում, և այդպիսի դրութիւն, ասելու է այստեղ, միշտ եղել է և պիտի լինի (ևս առաւել մեզ համար), ժամանակաւոր, երբ այդ քուրմերի թագաւորութիւնն անցնում է և մարդիկ մտնում են արթուն դարի մէջ, ոտքի կանգնելով երկարատե ննջելուց: Այժմ մենք կարող ենք մտիթարել մեզ, որ արդէն հասել է մեզ այդ արթնութեան և մտածողութեան դարը, եթէ այսօր ևս մէկ վերոյգրեւալ քուրմի մէկն կամենար դեր խաղալ իւր փառասիրական և շահասիրական նպատակին հասնելու, նա, սպասելի

է, որ չէր կարողանայ ունենալ այն յառաջադիմութիւնը, որ կուեննար նա քանի մի տարի սրանից առաջ: Այդ է պատճառը, որ մենք այժմ կարող ենք տգիտութեան նշան համարել այն զրոյցը, թէ «ամէն բան հեռուից աւելի լաւ կը թվայ» քան թէ մօտիկից: Արդ հետեւ այդ բանը կրկնողը և քարոզողը յայտնապէս Բանի էութեան հետ ծանօթ չէ, նորան մտածողութեան, մտաւոր քննութեան տակ չէ ձգել, նորա լաւն և վատն անընդմիջապէս չէ իմացել և հասկացել, այնու ամենայնիւ այդպիսի ոմն Բանի առաջի քայլերի վերայ դնում է կնիք անպիտանութեան. դորա պատճառն է պէտքի: Պատճառն հասկանալն բաւական է, որ հաստատ համոզմունք կազմել մեր մէջ, թէ վերոյիշեալ ասացուածը է սխալ եզրակացութիւն, որ զրկուած է իրողական հաստատութիւնից: Յառաջաբանութեանս նպատակը այն էր որ քննել այն ասացուածի կրկնողներին կիրքերը և նոցա վերջին նպատակները, որոնց նոքա մինչև այսօր հասել են, ասելով, թէ ամէն բան հեռուից աւելի լաւ կ' թվայ քան թէ մօտիկից: Այս բանս ես լսեցի ևս այն ժամանակը, երբ «Արարատ» ամսագիրը հրատարակեցաւ: Ուրախանալով դորանով քանիսն էրն խօսում էին, թէ ահա Հայոց Ակեղեցւոյ ծոցից, նոցա բարոյական և մտաւորական կենտրոնից, Հայաստանի օրօրոցից պիտի բղխի լուսաւորութեան աղբիւր, և միևնոյն ժամանակը նախադուշակութիւն նոքա անսպասելի յառաջադիմութիւն «Արարատին», Այստեղ ևս զրտնուեցան պէսսիմիստներ, որոնք այդ բանին ևս նայեցին իւրեանց սովորական ա-

տեղութեան հայեացքով: «Եւ, ինչեր էք
ասում, հէր օխնածներ, մեր հոգեւորական-
նէրից ի՞նչ է սպասելու, և ո՞վ կ'ցանկա-
նայ նրանց օգնել էլ գործի մէջ, ո՞ր են
մեր մէջ մարդիք, որ կարողանան մի ամա-
գիր շարունակ քանի մի տարի հրատարա-
կել, և վերջապէս ո՞վ կայ մեր մէջ մէկ ու-
սումնական Հայ, որ կարողանայ շատ քիչ
մարդավարի բան գրել, և ո՞վ հավէս ունի
այժմեան ժամանակ այնպիսի բաներ կար-
դալու: Հա, շարունակումն պէսսիմիստ-
ները. կարելի է ստորագրել ստանալու
,,Արարատ,, միայն Եջմիածնու անունը
վեր չձգելու համար, ևս առաւել որ էժան
գնով է հրատարակվում:»,

Եւ մեծ ուրախութեամբ այստեղ վի-
ճելու եմ այդ հայեացքի հետ, փաստերով
ապացուցանելով նորա վերջին աստիճան
գարշելի, կոյր, չարախնդացական բնու-
թիւնը: Գորա համար բաւական կ'լինի,
եթէ ես վեր առնեմ քանի ամսատետրակի-
ներ ,,Արարատի,, ուսկից կ'տեսնուի
այն մոռւորական և բարոյական արթնու-
թիւնը մեր ազգի մեծ մասի մէջ, որ մի-
այն լինելու է հիմն յառաջագիւծութեան:
Իսկ այն համոզմունքը, որ սուտ է, պէսսի-
միստների կեղծաւոր կարծիքը և վերջի-
նըն հերքելու նպատակաւ ես կամենումեմ
տալ նիւթ ,,Արարատին,, իմ այս տկար
աշխատութիւնովս:

(Պիտի շարունակվի):

Ահնէ+էրէ՛ Արթուր-նի

ՓՈՔԻ ԱՍԻԱՅԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԱՆԻՒՄԻՍԱՅԻՆ
ԱՓՐԻԿԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ:

(Ե. ԲԱՆԻ ՏԱՅՐԵԼ):

Միայն ամուրիները կը բնորոշում անց-
նում են ամբողջ երեկոն, ընտանեաց տէ-
րը սակաւ է լինում այն տեղ: Սուրճ,
արաղ, թղթախաղ և բիւրրղը քաղա-
քականութեան հետ Յոյնի զբաղմանց մի-
ակ առարկան են: Արեւնորում ծագում
են խռովութիւններ, ֆիլէլիններ ժողով-
ներ, տարածում են հեռագրալուրներ և
պամֆլէտներ (զրգուիչ բովանդակութեամբ
զրքոյկներ): այս տեղերում պարզ երե-
ւում է յունական բնաւորութիւնը, որ
շատ անգամ անպատուութիւն է պատ-
ճառում նորան: Յոյները, արեւելքի բո-
լոր քրիստոնեաների նման, սիրում են ա-
ռաւել շատ խօսել, քան թէ գործել:
Իայց պէտք է ասել, որ ամուսնացեալ
Յոյնը, որ առհասարակ բարի ամուսին և
հայր է իւր ազատ ժամերը մեծ մասամբ
անցնում է ընտանիքի հետ: Ըստ հագիւ-
ն է պատահում, որ երիտասարդ Յոյնը լա-
կրթեալ լինի: Չէ կարելի ասել, որ նա
բարոյական է, բայց շատ փոքր է պատա-
հում, որ Յոյնը բարոյականութեան մա-
սին հասուն հասկացողութիւն ունենայ.
ամուսնացած օրից, նա նոյն հեշտութեամբ
թողնում է իւր գնացած մոլորութեան
ճանապարհը, ինչ դիւրութեամբ որ ըն-
կել էր նա սկզբում նորա վերայ: Ամուս-
նացած ժամանակը նա չէ զգընում, որ իւր
ամուրի կեանքը վատ է անցել և չէ գնա-
հատում ընտանեկան կեանքի բարիքները:
Այնուհետեւ նորա մտածմանց առարկա-